ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ 1

Կազմված է 15.02.2020թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱԴԵԿՎԱԴ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

«15» ՓԵՏՐՎԱՐԻ 2020Թ.

ՀԻՄՆԱԴԻՐ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿՈՂՄԻՑ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ 211.112.1122555

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ

02825295

«02» մարտի 2020Թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

05

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԴԵԿՎԱԴ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2020

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Ադեկվադ» կուսակցության (այսուհետ նաև՝ Կուսակցություն) հայերեն անվանումն է՝ «Ադեկվադ» կուսակցություն (հապավումը՝ ԱԿ), ռուսերեն անվանումը՝ Партия "Адеквад" (հապավումը՝ ПА), անգլերեն անվանումը՝ "Adekvad" Political Party (հապավումը՝ APP):

1.2. Կուսակցությունն ունի խորհրդանշան, որի նկարագրությունը և պատկերը ներկայացված են սույն կանոնադրության բաղկացուցիչ մաս կազմող Հավելված 1-ում:

2. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԸ

2.1. Կուսակցության անդամ կարող է լինել տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր գործունակ քաղաքացի, ով ընդունում է Կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը և չի հանդիսանում մեկ այլ կուսակցության անդամ: Կուսակցության հիմնադիրները կուսակցության պետական գրանցումից հետո օրենքի ուժով դառնում են Կուսակցության անդամ: Կուսակցության անդամ չեն կարող լինել «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով (այսուհետ՝ Սահմանադրական օրենք) և այլ օրենքներով կուսակցության անդամ լինելու իրավունք չունեցող անձինք:

2.2. Կուսակցությանն անդամագրվում են կամավոր հիմունքներով, անհատական կարգով, Կուսակցության վարչության նախագահին ուղղված անձնական դիմումի հիման վրա: Անդամագրության հարցը լուծում է Կուսակցության վարչության նախագահը: Կուսակցությանն անդամակցության համար սահմանվում է փորձաշրջան, որը չի կարող երեք ամսից ավել տևել: Կուսակցության վարչության նախագահը կարող է նախքան փորձաշրջանի ժամկետի ավարտը որոշում կայացնել անդամակցության ընդունվելու կամ չընդունվելու վերաբերյալ:

2.3. Եթե Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ կամ օրենքներով Կուսակցությանն անդամակցությունն անթույլատրելի է դառնում, այն կասեցվում է Կուսակցության անդամի դիմումի հիման վրա՝ Կուսակցության վարչության նախագահի որոշմամբ: Կասեցումը հանվում է նույն կարգով: Կուսակցության վարչության նախագահը կարող է Կուսակցության անդամի՝ Կուսակցությանն անդամակցությունը կասեցնել նաև այլ դեպքերում: Այդ դեպքերում ևս կասեցումը հանվում է նույն կարգով:

2.4. Կուսակցությանն անդամությունը դադարեցվում է Կուսակցության վարչության որոշմամբ՝

2.4.1. Կուսակցության անդամի անձնական դիմումի համաձայն՝ Կուսակցությունից դուրս գալու դեպքում.

2.4.2. Կուսակցությունից հեռացվելու դեպքում.

2.4.3. Կուսակցության անդամի մահվան դեպքում.

2.4.4. Կուսակցության լուծարման դեպքում:

2.5. Սահմանադրական օրենքով նախատեսված իրավունքներից բացի՝ Կուսակցության անդամն իրավունք ունի՝

2.5.1. Կուսակցության մարմինների քննարկմանը ներկայացնել հասարակական-քաղաքական կյանքի տարբեր հարցերի վերաբերյալ նախաձեռնություններ և առաջարկություններ.

2.5.2. մասնակցել այն ժողովին կամ նիստին, որտեղ քննարկվում է իր անձնական հարցը կամ առաջարկությունը, արտահայտել իր կարծիքը քննարկվող հարցերի վերաբերյալ:

2.6. Կուսակցության մարմինների որոշումներն ու գործողությունները Կուսակցության անդամների կողմից կարող են բողոքարկել Կուսակցության վարչության նախագահին:

2.7. Կուսակցության անդամը պարտավոր է՝

2.7.1. գործել Կուսակցության ծրագրի և կանոնադրության շրջանակներում.

2.7.2. կատարել Կուսակցության համագումարի և Կուսակցության մարմինների որոշումները.

2.7.3. մասնակցել այն ժողովներին և նիստերին, որոնց հրավիրված է.

2.7.4. կատարել սույն կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

2.8. Կուսակցության կանոնադրությամբ նախատեսված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կուսակցակության անդամը Կուսակցության վարչության նախագահի կողմից կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության հետևյալ միջոցների՝

2.8.1. նկատողություն.

2.8.2. խիստ նկատողություն.

2.8.3. Կուսակցությունից հեռացում:

3. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

3.1. Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը Կուսակցության վարչությունն է: Այն կազմված է Կուսակցության վարչության նախագահից և անդամներից: Կուսակցության վարչությունը ձևավորվում և կազմալուծվում է Կուսակցության համագումարի որոշմամբ: Կուսակցության վարչության կազմում փոփոխությունները կատարվում են Կուսակցության համագումարի որոշմամբ:

3.2. Կուսակցության վերահսկողություն իրականացնող մարմինը Կուսակցության կարգապահական հանձնաժողովն է: Այն կազմված է Կուսակցության կարգապահական հանձնաժողովի նախագահից և անդամներից: Կուսակցության կարգապահական հանձնաժողովը ձևավորվում և կազմալուծվում է Կուսակցության համագումարի որոշմամբ: Կուսակցության կարգապահական հանձնաժողովի կազմում փոփոխությունները կատարվում են Կուսակցության համագումարի որոշմամբ:

3.3. Կուսակցության վարչությունը պարտավոր է՝

3.3.1. կազմակերպել, ղեկավարել և վերահսկել Կուսակցության համագումարի որոշումների կատարման ընթացքը.

3.3.2. վերահսկել Կուսակցության տարածքային ստորաբաժանումների, դրանց ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների աշխատանքը:

3.4. Կուսակցության վարչությունը սույն կանոնադրության 3.3.2-րդ կետով նախատեսված պարտականության կատարման արդյունքում իրավունք ունի Կուսակցության վարչության նախագահին ներկայացնել այդ մարմինների աշխատանքների բարելավմանն ուղղված առաջարկություններ:

3.5. Կուսակցության կարգապահական հանձնաժողովը պարտավոր է՝

3.5.1. Կուսակցության վարչության նախագահի հանձնարարությամբ քննարկել կուսակցության անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը և կարծիք ներկայացնել Կուսակցության վարչության նախագահին.

3.5.2. վերահսկողություն իրականացնել Կուսակցության ֆինանսական գործունեության նկատմամբ.

3.5.3. Կուսակցության վարչության նախագահի հանձնարարությամբ ստուգել Կուսակցության գույքի հետ կապված գործընթացները:

3.6. Կուսակցության կարգապահական հանձնաժողովը սույն կանոնադրության 3.5.2-րդ և 3.5.3-րդ կետերով նախատեսված պարտականությունների կատարման արդյունքում իրավունք ունի Կուսակցության վարչության նախագահին առաջարկություններ ներկայացնել Կուսակցության ֆինանսական գործունեության և գույքի հետ կապված գործընթացների բարելավման ուղղությամբ:

3.7. Կուսակցության վարչությունը և Կուսակցության կարգապահական հանձնաժողովը գործում են անժամկետ:

3.8. Կուսակցության վարչության նախագահի որոշմամբ Կուսակցությունում կարող են ստեղծվել կառուցվածքային ստորաբաժանումներ:

4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

4.1. Կուսակցության հերթական համագումարը հրավիրվում է չորս տարին մեկ անգամ:

4.2. Կուսակցության արտահերթ համագումար կարող է հրավիրվել Կուսակցության վարչության որոշմամբ:

4.3. Կուսակցության համագումարի պատվիրակներն ընտրվում են Կուսակցության վարչության նախագահի կողմից՝ նրա կողմից համագումարից առնվազն 5 օր առաջ կայացված որոշմամբ:

4.4. Կուսակցության համագումարը պարտավոր է որոշումներ կայացնել Սահմանադրական օրենքով կուսակցության համագումարի բացառիկ իրավասություններ համարվող հարցերի վերաբերյալ:

4.5. Կուսակցության համագումարն իրավունք ունի քննարկելու իր որոշմամբ սահմանված ցանկացած հարց, որի վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը օրենքով կամ սույն կանոնադրությամբ վերապահված չէ այլ մարմնի:

5. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ

5.1. Բացի սույն կանոնադրությամբ նախատեսված այլ պարտականություններից՝ Կուսակցության վարչության նախագահը՝

5.1.1. իրականացնում է Կուսակցության ընդհանուր ղեկավարումը.

5.1.2. ներկայացնում է Կուսակցությունը, դրա շահերը և դիրքորոշումը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական, քաղաքական և միջազգային կազմակերպությունների հետ ունեցած հարաբերություններում կամ այդ նպատակով լիազորում է Կուսակցության վարչության այլ անդամի.

5.1.3. հրավիրում է Կուսակցության վարչության նիստերը, վարում դրանք, կուսակցության անունից ստորագրում է բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը.

5.1.4. Ազգային ժողովի ընտրություններին և Երևան, Գյումրի, Վանաձոր քաղաքների ավագանիների ընտրություններին Կուսակցության մասնակցության դեպքում սահմանում է Կուսակցության ընտրական ցուցակների ձևավորման կարգը՝ հաշվի առնելով Կուսակցության անդամների, ինչպես նաև տարածքային ստորաբաժանումների ներկայացրած առաջարկությունները:

5.2. Կուսակցության վարչության նախագահն իրականացնում է բոլոր այն լիազորությունները, որոնք Սահմանադրական օրենքով կամ սույն կանոնադրությամբ վերապահված չեն Կուսակցության այլ մարմիններին:

5.3. Կուսակցության վարչության նախագահն ընտրվում է համագումարի կողմից անժամկետ՝ համագումարի պատվիրակների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Կուսակցության վարչության նախագահի թեկնածություններն առաջադրվում են համագումարի պատվիրակների կողմից:

6. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ

6.1. Կուսակցության տարածքային ստորաբաժանումները ստեղծվում են Կուսակցության վարչության նախագահի որոշմամբ:

6.2. Կուսակցության տարածքային ստորաբաժանումների գործունեությունը դադարեցվում է Կուսակցության վարչության նախագահի որոշմամբ՝ տարածքային ստորաբաժանման վարչության անդամի դիմումի հիման վրա:

6.3. Կուսակցության տարածքային ստորաբաժանման ղեկավար մարմինը՝ տարածքային ստորաբաժանման վարչությունն է, իսկ վերահսկողություն իրականացնող մարմինը՝ տարածքային ստորաբաժանման կարգապահական հանձնաժողովը, որոնք ձևավորվում և կազմալուծվում են Կուսակցության վարչության նախագահի որոշմամբ, գործում են մինչև Կուսակցության վարչության նախագահի որոշմամբ կազմալուծվելը:

6.4. Կուսակցության տարածքային ստորաբաժանումները պարտավոր են կատարել Կուսակցության համագումարի, Կուսակցության վարչության նախագահի, Կուսակցության վարչության և կարգապահական հանձնաժողովի որոշումները:

6.5. Կուսակցության տարածքային ստորաբաժանումներն իրավունք ունեն Կուսակցության վարչության նախագահին առաջարկություններ ներկայացնել Կուսակցության աշխատանքների բարելավման վերաբերյալ:

7. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ԳՈՒՅՔԸ

7.1. Կուսակցության դրամական միջոցների և գույքի ձեռքբերման աղբյուրներն են՝

7.1.1. Սահմանադրական օրենքով նախատեսված նվիրատվությունները.

7.1.2. Սահմանադրական օրենքով նախատեսված կարգով բյուջետային ֆինանսավորումը.

7.1.3. Սահմանադրական օրենքով սահմանված գործունեությունից ստացված եկամուտները:

7.2. Կուսակցության տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումները Կուսակցության գույքը կառավարում են Կուսակցության վարչության նախագահի սահմանած կարգով:

8. ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

8.1. Սույն կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կուսակցության համագումարի կողմից, բացառությամբ Սահմանադրական օրենքի փոփոխությամբ պայմանավորված փոփոխությունների և լրացումների, որոնք կատարվում են Կուսակցության վարչության կողմից:

8.2. Սույն կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կուսակցության վարչության նախագահի առաջարկությամբ:

Հավելված 1.
«Ադեկվատ» կուսակցության կանոնադրության

Կուսակցության խորհրդանշանի վրա պատկերված է վահան, որի կենտրոնում առկա է հավասարաթև, ոճավորված խաչ: